ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 4 անդամներ:

Բացակա էր՝ Ալեքսանդր Բլոխինովը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ալեքսեյ Չիչյովը

Նիստը արձանագրում էր՝ ը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու հերթական նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի նոյեմբերի 12-ը, ժամը 11:00-ը:

2. Նիստը կազմակերպել ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ղեկավարի աշխատասենյակում, հասցեն՝ Ֆիոլետովո համայնք, 1-ին փողոց, 146 շենք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի «ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ.-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է՝

Կատարել փոփոխություն Ֆիոլետովո համայնքի 2024թ.-ի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2025 թ.-ի բյուջեն հաստատելու մասին» թիվ 34-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 Թ._Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6_Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Ֆիոլետովո համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու 2025թ-ի հոկտեմբերի 6-ի թիվ 06 հերթական նիստի օրակարգը.

Օրակարգ.

1. Ֆիոլետովո համայնքի 2025 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Ֆիոլետովո համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը՝ հաստատելու մասին

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը հաստատելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու հերթական նիստի օրը և ժամը սահմանելու մասին

5. Ֆիոլետովո համայնքի 2024թ.-ի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի 2025 թ.-ի բյուջեն հաստատելու մասին» թիվ 34-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ՝ ՀԱՍԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով, քաղաքացիների կողմից համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին հասցեագրված դիմում-բողոքների քննարկման ոլորտում վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու, քաղաքացիների ընդունելության ընթացակարգը բարելավելու և ավագանու դերակատարության ու պատասխանատվության բարձրացման նպատակով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել ընդունելության համար դիմած քաղաքացիների համար լրացվող ուղղորդող թերթիկի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել ընդունելության նախնական գրանցման համար դիմած քաղաքացիների գրանցման քարտի ձևը՝ համաձայն հավելված 3-ի:

4. Սույն որոշումը և քաղաքացիների ընդունելության օրերի և ժամերի մասին տեղեկատվությունը փակցնել Ֆիոլետովոյի համայնքապետարանի վարչական շենքում՝ քաղաքացիների համար տեսանելի վայրում:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26-Ա)*

Ավագանու անդամներ

ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ

ՄԻԽԱԻԼ ՉԻՉՅՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

ՄԻԽԱԻԼ ՌՈՒԴՈՄՅՈՏԿԻՆ

Համայնքի ղեկավար

ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ_____

Նիստն արձանագրեց՝ Ը_____